





1. «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կանոնադրությունում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1. 32-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Խորհուրդն է: Խորհուրդը բաղկացած է 36 անդամներից»:

1.2. 33-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Խորհրդի անհատական կազմը սահմանում, Խորհրդի անդամներին ընտրում է հիմնադիրը: Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումներն ընդունում է հիմնադիրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահը ի պաշտոնե հանդիսանում է Խորհրդի նախագահը: Խորհրդի երկու փոխնախագահներից մեկը ի պաշտոնե ՀՀ Սահմանադրական Դատարանի Նախագահն է, իսկ մյուսը նշանակվում է Խորհրդի կողմից:

Ի պաշտոնե Խորհրդի անդամներ են հանդիսանում.

- ա) ՀՀ Ազգային ժողովի նախագահը,
- բ) ՀՀ վարչապետը,
- գ) ՀՀ Արտաքին գործերի նախարարը,
- դ) ՀՀ Ֆինանսների նախարարը,
- ե) ՀՀ Սփյուռքի նախարարը,
- զ) ՀՀ Կենտրոնական բանկի նախագահը,
- է) ԼՂՀ նախագահը,
- ը) ԼՂՀ վարչապետը,
- թ) Ամենայն Հայոց Կաթողիկոսը,
- ժ) Մեծի տանն Կիլիկիո Կաթողիկոսը,
- ի) Հայ Կաթողիկե եկեղեցու Կաթողիկոս-Պատրիարքը,

Վերոնշյալ անձանց լիազորությունները համարվում են դադարած նրանց զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու կամ նրանց զբաղեցրած պաշտոնի վերացման մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

Խորհրդի անդամներ են հանդիսանում.

- ա) ՀՀ և ԼՂՀ պաշտոնաթող նախագահները (համաձայնությամբ),
- բ) Հայ ավետարանական եկեղեցու ներկայացուցիչը,
- գ) Ռամկավար ազատական կուսակցության ներկայացուցիչը,
- դ) Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչը,
- ե) Ս.Դ. Հնչակյան կուսակցության ներկայացուցիչը,
- զ) Ամերիկայի հայկական համագումարի ներկայացուցիչը,
- է) Հայ բարեգործական ընդհանուր միության ներկայացուցիչը,
- ը) Հայ օգնության միության ներկայացուցիչը,
- թ) Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության ներկայացուցիչը:

Խորհրդի անդամ կարող են լինել նաև այլ հեղինակավոր կազմակերպությունների ներկայացուցիչները և անձինք»:

1.3. 45-րդ կետի ա) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ա) Բաղկացած է տասներկու անդամներից (առնվազն հինգը սփյուռքից, մեկը Արցախից), ընտրվում է Խորհրդի կողմից հինգ տարի ժամկետով, վերընտրվելու իրավունքով, նիստերի միջև ընկած ժամանակահատվածում հրատապ հարցերի լուծման համար, ինչպես նաև Խորհրդի իրավասության (բացի բացառիկ իրավասություններից՝ Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին որոշումների ընդունումը, վերստուգիչ հանձնաժողովի ընտրումը և հանձնաժողովի անդամների իրավասությունների վաղաժամկետ դադարեցումը և Հիմնադրամի վերակազմակերպման ու լուծարման մասին որոշման ընդունումը) հարցերին՝ ժամանակավոր լուծում (մինչև առաջիկա Խորհրդի նիստը)՝ տալու համար: Առանձին դեպքերում կարող է հարցման կարգով դիմել Խորհրդի բոլոր անդամներին՝ ստանալու համար վերջիններիս համաձայնությունը: